

## **Մեծարգո պարոն Բաբլունյան,**

Գուցե մի փոքր անսովոր թվա Ձեզ, բայց Ձեզ գրում է մի ֆաղափացի, ում մայրը՝ Եվգենիյա Սիմոնի Մեսրոպյանցը, սույն թվականի նոյեմբերի 23-ից դեկտեմբերի 1-ը ծայրահեղ ծանր վիճակում գտնվում էր Ձեր դեկավարած բուժաստատության ինտենսիվ թերապիայի բաժանմունքում: Հարգելի բժիշկ, մորս կյանքը, ցավոք, չհաջողվեց փրկել, բայց անգամ սգի ու վշտի մեջ գտնվելով հանդերձ պարտքս եմ համարում Ձեզ անձամբ գրել և ևս մեկ անգամ փաստել, որ մորս հիվանդանոցում գտնվելու օրերին վերստին համոզվեցի, որ ի դեմս ձեր ողջ անձնակազմի մեկն ունեւն իրական բժիշկներ, Կոչումով բժիշկներ, Առաքելությամբ բժիշկներ: Հավատացած եղեմ՝ սրանք լույս խոսքեր չեն, սա ցավի ու հպարտության, սգի մեջ երախտագիտության ոչ արտասովոր դրսևորում է: Չափազանցած չեմ լինի, եթե ասեմ, որ Ձեր ողջ անձնակազմը այն եզակիներից է հանրապետությունում, ում առաջինն է անհրաժեշտ ցավակցել հիվանդի կյանքը փրկել չկարողանալու դեպքում: Դրանում գոնե ես համոզվել եմ անձամբ:

Մեծագույն հույս ունեմ, որ Ձեր անձնակազմի այս օրինակը պետք է վարակիչ լինի մնացյալ բուժաստատությունների և յուրաքանչյուր բուժաբժախատողի համար: Ցավով եմ հռում, բայց շատ չեմ դեպքերը, երբ բուժաբժախատողի սերը, հարգալից վերաբերմունքը, նվիրվածությունը, հոգատարությունն ու պրոֆեսիոնալիզմը սեփական առաքելության ու պացիենտների նկատմամբ հասնի այն աստիճանի, որ անգամ հիվանդի կյանքը փրկել չկարողանալուց հետո վերջինի ընտանիքը ցանկություն ունենա ամենայն անկեղծությամբ ցավակցել հենց բուժանձնակազմին և երախտի խոսք հայտնել պարզ, մարդկային, հոգատար ու անձնվիրաբար վերաբերմունքի համար:

Մեծարգո պարոն Բաբլունյան և արդեն իմ լավ բարեկամ, չեմ ուզում երկար գրել Ձեր ժամանակը չվատնելու համար, բայց միևնույն ժամանակ խնդրում եմ իմ ընտանիքի և անձամբ իմ՝ մահացածի որդու երախտի խոսքը փոխանցեմ համալսարանական հիվանդանոցի ողջ անձնակազմին և հատկապես նյարդաբուժական կլինիկայի դեկավար Ֆանարջյանին ու իր ողջ կալեկտիվին՝ մայրապետից մինչև բժիշկ, ինտենսիվ ծառայության անձնակազմին, ընդունարանի ու անհետաձգելի բուժօգնության ծառայության բոլոր աշխատակիցներին: Ցանկանում եմ, որ վստահ լինեմք, որ Ձեր անձնակազմի անձնվիրաբար ծառայության ու նվիրվածության արդյունքում ոչ միայն մեղմվում է մեր՝ սգավորներիս ցավը, այլև՝ ևս մեկ անգամ արժևորվում է Բժեկի Առաքելությունը:

Աստված պահպան Ձեզ ու Ձեր ընտանիքներին...

Հարգանքով՝

**Ա. Ալեքսանյան**